1	Լիթիում, գ/կգ	0.0118	0.00807	0.00780	0.0106	0.0109	0.0117	0.0139	0.0104	0.0139	0.0179	0.0289	0.0136	0.0192	0.00568
2	Բերիլիում, գ/կգ	0.00115	0.00115	0.000845	0.000904	0.000819	0.00102	0.00193	0.00108	0.000878	0.000814	0.00114	0.000711	<0.0001	<0.0001
3	Բոր, գ/կգ	0.0184	0.0111	0.0132	0.0188	0.0210	0.0183	0.0223	0.0243	0.0262	0.0321	0.0383	0.0264	0.0348	0.0121
4	Նատրիում, գ/կգ	5.597	9.191	5.370	5.039	4.302	5.086	6.409	6.479	3.941	3.225	6.110	5.742	4.572	4.118
5	Մագնեզիում, գ/կգ	3.633	2.396	4.365	5.001	4.949	5.134	5.076	5.174	6.226	6.115	9.375	6.302	6.728	3.986
6	Ալյումին, գ/կգ	52.33	41.43	48.63	37.56	35.94	47.28	51.58	42.42	41.63	33.85	46.53	44.57	39.87	43.78
7	Ընդհանուր ֆոսֆոր, գ/կգ	1.193	1.271	1.624	1.177	0.796	1.314	1.436	1.467	0.590	0.441	0.529	0.682	0.513	0.849
8	Կալիում, գ/կգ	7.572	10.62	9.969	8.064	7.252	12.39	11.56	9.667	9.749	8.621	11.86	8.587	10.04	8.138
9	Կալցիում, գ/կգ	9.648	8.914	12.50	13.03	21.88	22.62	12.76	22.67	39.19	44.85	44.20	31.89	34.57	23.19
10	Տիտան, գ/կգ	3.707	3.239	3.186	3.289	3.087	3.158	3.941	3.071	2.770	2.370	2.691	3.178	2.452	2.884
11	Վանադիում, գ/կգ	0.0873	0.0788	0.0840	0.0806	0.0740	0.0878	0.0883	0.0816	0.0677	0.0602	0.0667	0.0720	0.0540	0.0703
12	Քրոմ, գ/կգ	0.0254	0.0148	0.0295	0.0382	0.0446	0.0286	0.0278	0.0351	0.0498	0.0488	0.0542	0.0441	0.0471	0.0596
13	Երկաթ, գ/կգ	28.72	24.18	24.73	25.69	25.53	26.48	34.36	29.16	25.93	22.62	28.44	27.09	23.69	26.97
14	Մանգան, գ/կգ	0.656	0.551	0.572	0.507	0.477	0.564	0.771	0.561	0.534	0.403	0.525	0.473	0.473	0.694
15	Կոբալտ, գ/կգ	0.0149	0.00973	0.0113	0.0139	0.0142	0.0123	0.0133	0.0127	0.0150	0.0151	0.0153	0.0147	0.0124	0.0111
16	Նիկել, գ/կգ	0.0263	0.0133	0.0193	0.0363	0.0354	0.0228	0.0237	0.0279	0.0368	0.0363	0.0370	0.0354	0.0354	0.0174
17	Պղինձ, գ/կգ	0.126	0.177	0.651	0.203	0.160	0.224	0.145	0.280	0.0561	0.0277	0.0319	0.0304	0.0267	0.220
18	Ցինկ, գ/կգ	0.0544	0.133	0.373	0.0664	0.163	0.0558	0.0802	0.196	0.0569	0.0433	0.0644	0.0462	0.0471	1.944
19	Արսեն, գ/կգ	0.00897	0.00957	0.0204	0.0115	0.00856	0.0216	0.0110	0.0126	0.0115	0.00851	0.0104	0.00708	0.00716	0.0304
20	Սելեն, գ/կգ	0.00444	0.00497	0.00979	0.00425	0.00511	0.00453	0.00579	0.00525	0.00561	0.00532	0.00805	0.00570	0.00421	0.00389
21	Ստրոնցիում, գ/կգ	0.102	0.133	0.161	0.197	0.124	0.153	0.122	0.171	0.143	0.166	0.283	0.141	0.151	0.107
22	Մոլիբդեն, գ/կգ	0.00514	0.0890	2.67	0.0638	0.209	0.0178	0.00862	0.0597	0.00702	0.000769	0.00495	0.000688	<0.0001	0.00172
23	Կադմիում, գ/կգ	0.000170	0.000285	0.003587	0.000337	0.000515	0.000194	0.000170	0.000351	0.000220	0.000176	0.000146	0.000127	<0.0001	0.0126
24	Անագ, գ/կգ	<0.001	<0.001	0.00146	<0.001	0.00102	<0.001	0.00136	0.00125	<0.001	<0.001	0.00115	<0.001	<0.001	<0.001
25	Ծարիր, գ/կգ	0.000831	0.000595	0.00174	0.000755	0.000629	0.00114	0.00104	0.00107	0.000690	0.000478	0.000585	0.000297	<0.0001	0.00074
26	Բարիում, գ/կգ	0.144	0.201	0.252	0.178	0.161	0.275	0.150	0.225	0.203	0.186	0.267	0.134	0.189	0.143
27	Կապար, գ/կգ	0.0120	0.0155	0.0580	0.0137	0.0205	0.0182	0.0164	0.0284	0.0132	0.0104	0.0138	0.00760	0.00998	0.200
28	Բիսմութ, գ/կգ	0.0376	0.0236	0.131	0.0378	0.0340	0.0330	0.0171	0.0249	0.0139	0.00844	0.0123	0.00395	0.0153	0.0258
29	Ուրան, գ/կգ	0.000767	0.00142	0.00121	0.000729	0.000902	0.00131	0.00167	0.00118	0.000929	0.000814	0.00107	0.000682	0.000919	0.00060
30	pH	8.13	8.45	7.59	8.24	8.15	8.5	8.23	8.13	8.33	8.15	8.19	8.04	7.93	8.32
31	Էլ/հաղորդակ- ցություն, $\mu\text{S}/\text{սմ}$	73.9	71.8	155.2	111.2	131.3	90.8	94.6	192.4	115.6	131.3	130.4	126.9	178.6	133.2

Ընդերքօգտագործման տարածքում բուսական և կենդանական աշխարհի ուսումնասիրության արդյունքներ

2022-2023թթ.-ին իրականացվել է «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի ընդերքօգտագործման տարածքների բուսական և կենդանական աշխարհի ուսումնասիրություն: Ուսումնասիրվել են՝

1. Բացահանքի հյուսիս-արևմտյան սահմանի հարևանությամբ գտնվող Թթու ջուր կոչվող հատվածը,
2. Բացահանքի հյուսիսային հատվածը,
3. Բացահանքի հարավային հատվածը,
4. Ձորատեղի (Դարազամի) դատարկ ապարների լցակույտի վերին հատվածը,
5. Ձորատեղի (Դարազամի) դատարկ ապարների լցակույտի ստորին հատվածը,
6. Քաջարան քաղաքի ստորին մասի ստուգիչ հատվածը,
7. Քաջարանի կոմբինատի տարածքը,
8. Ողջի գետի հովտի դատարկ ապարների լցակույտի հատվածը,
9. Ողջի և Վաչագան գետերի միախառնման վայրի ստուգիչ հատվածը,
10. Արծվանիկի պոչամբարի հարավային հատվածը,
11. Արծվանիկի պոչամբարի հյուսիս-արևմտյան հատվածը,
12. Արծվանիկի պոչամբարի հարավ-արևելյան հատվածը,
13. Արծվանիկի պոչամբարի հյուսիս-արևելյան հատվածը,
14. Աճանան գետի ափի IV թունելի և մոտակա վայրերի ստուգիչ հատվածը,
15. Ձորաստան գյուղի հարևանությամբ գտնվող ստուգիչ հատվածը:

Ընդհանուր առմամբ 2022-2023 թվականներին ուսումնասիրված 15 տարածքներում դիտարկվել են 341 տաքսոն բարձրակարգ բույսեր: Ուսումնասիրված տարածքների համար առաջին անգամ բերվում են մոտ 120 տաքսոն:

Թթու ջրի հարևանությամբ գտնվող հատվածում 2023 թվականների ուսումնասիրություններում ֆիքսվել է Զանգեզուրի զանգակ տեսակի առանձնյակներին միկրոպոպուլյացիաների քանակի աճ: Այստեղ 2023 թվականին դիտարկվել են 127 բուսատեսակ, որոնցից մոտ 80-ը առաջին անգամ են բերվում տվյալ կետի համար: Տեսակների մեծ բազմազանություն է դիտարկվել նաև սնկերի, քարաքոսերի և մամռանմանների ֆլորայում: 2021 թվականին դիտարկված սնկերի 8 տաքսոններին ավելացել են ևս երկուսը, իսկ քարաքոսերի թիվը ավելացել է երեքով, հասնելով 11-ի:

2022-2023 թվականներին շարունակվել է **Արծվանիկի պոչամբարի ափամերձ հատվածների** ֆլորայի և բուսականության ուսումնասիրությունը: Այստեղ ուսումնասիրվել են պոչամբարի արևմտյան, արևելյան, հարավային և հարավ-արևելյան ափերի հատվածները: 2022-2023 թվականներին դիտարկվել են 132 տաքսոններ, որոնցից մոտ 90-ը առաջին անգամ են բերվում տվյալ կետերի համար: Այստեղ 2023 թվականին հայտնաբերվել է ՀՀ բույսերի կարմիր գրքային Հիրիկ նեղզճային (*Iris lineolata*) տեսակը:

2022-2023 թվականներին շարունակվել են **Աճանան գետի հովտում չորրորդ թունելի ելքի և թունելից վերև ու ներքև, գետի ձախափնյա ևս երկու կետերի հատվածներում** ֆլորայի և բուսականության ուսումնասիրությունը: Համեմատած 2021 թվականի հետ գետահովտային ծառաթփային ֆլորան էական փոփոխություններ չի կրել, տեսակների քանակով և զբաղեցրած տարածքներով ավելացել է մոլախոտային բուսականությունը: Այստեղ 2022-2023 թվականներին դիտարկվել են 45 տաքսոններ, որոնցից 12-ը առաջին անգամ են բերվում տվյալ կետերի համար:

2022-2023 թվականներին շարունակվել է **Ձորաստան գյուղի շրջակայքի ստուգիչ կետի տարածքի** ֆլորայի և բուսականության ուսումնասիրությունը: Այստեղ գարնանը հայտնաբերվել են ռելիկտային Ատամնախոտ հնգատերև (*Dentaria quinquefolia*), ՀՀ բույսերի կարմիր գրքային Ձմեռնածաղիկ Արսյուշենկոյի (*Galanthus artjuschenkoae*) տեսակները, որոնք Աճանանի գետահովտի այլ արժեքավոր բուսա և սնկատեսակների հետ միասին վկայում են գետահովտի բնապահպանական կարևորությունը: 2022-2023 թվականներին այստեղ դիտարկվել են 45 տաքսոններ, որոնցից մոտ կեսը առաջին անգամ է բերվում տվյալ կետի համար:

2022-2023 թվականներին 2021թ.-ի հետ համեմատած առաջին անգամ ուսումնասիրվել է **Ողջի գետի հովտում** գտնվող դատարկ ապարների լցակույտի մակերեսի ֆլորայի և բուսականության ուսումնասիրությունը: 2022-2023 թվականներին այստեղ դիտարկվել են 46 տաքսոններ, որոնցում մեծ դեր են խաղում պիոններ և մոլախոտային բուսատեսակները: Դրական միտում է որոշ թփա և ծառատեսակների աճը տվյալ տարածքում:

2022-2023 թվականներին 2021թ.-ի հետ համեմատած առաջին անգամ ուսումնասիրվել է **Ձորատեղի (Դարազամի) պոչամբարի վերին և ստորին հատվածների** ֆլորան և բուսականությունը: 2022-2023 թվականներին այստեղ դիտարկվել են 62 տաքսոններ, որոնցից մոտ մեկ երրորդը մեր կողմից առաջին անգամ է բերվում տվյալ կետի համար: Թարմ թափվածքների վրա աճող առաջին բույսերից է Տատրակ սովորականը (*Tussilago farfara*), իսկ հին թափվածքների եզրերին աճում են բազմամյա խոտաբույսեր և փոքր ծառեր՝ օր. Այծուռենին (*Salix caprea*):

2022-2023 թվականներին 2021թ.-ի հետ համեմատած առաջին անգամ ուսումնասիրվել է **բացահանքի վերին՝ հյուսիսային և ստորին՝ հարավային հատվածների** ֆլորան և բուսականությունը: 2022-2023 թվականներին այստեղ դիտարկվել են 14 տաքսոններ, որոնք համարյա ամբողջությամբ բաղկացած են պիոններ և մոլախոտային խոտատեսակներով:

2022-2023 թվականներին 2021թ.-ի հետ համեմատած առաջին անգամ ուսումնասիրվել է **կոմբինատի տարածքի վերին և ստորին հատվածների** ֆլորան և բուսականությունը: 2022-2023 թվականներին այստեղ դիտարկվել են 18 տաքսոններ, որոնց մեծ մասը կազմում են մոլախոտային խոտատեսակները: Այստեղ աճում են նաև որոշ գեղազարդային ծառատեսակներ (Սոսի արևելյան-*Platanus orientalis*, Չիչխան դժնիկանման-*Hippophaë rhamnoides*), սակայն երկնածառ բարձրաբուն (*Ailanthus altissima*) ինվազիվ տեսակն աստիճանաբար զրավում է կոմբինատի տարածքի անխնամ բոլոր հատվածները:

2022-2023 թվականներին 2021թ.-ի հետ համեմատած առաջին անգամ ուսումնասիրվել է **Քաջաքան քաղաքի ստորին մասի ստուգիչ հատվածի** ֆլորան և բուսականությունը: Այստեղ դիտարկվել են 14

տաքսոններ, որոնք բաղկացած են գետամերձ ծառերից ու թփերից, տնամերձերի պտղատու ծառատեսակներից, ինչպես նաև որոշ մոլախոտային խոտատեսակներից:

2022-2023 թվականներին 2021թ.-ի հետ համեմատած առաջին անգամ ուսումնասիրվել է **Կապան քաղաքի տարածքով հոսող Վաչագան գետի ստորին հոսանքը և քաղաքային ափամերձ հատվածի** ֆլորան և բուսականությունը: Այստեղ դիտարկվել են 25 տաքսոններ, որոնք համարյա ամբողջությամբ բաղկացած են ջրային, ջրամերձ խոտատեսակներից ու ծառատեսակներից, մոլախոտային որոշ խոտատեսակներից ու ափամերձ գեղազարդային ծառատեսակներից: 2023թ.-ին ծառաթփային բուսականության կազմը փոփոխության համարյա չի ենթարկվել: Միայն նկատվում է առաջխաղացում որոշ ինվազիվ տեսակների (երկնածառ, ռոբինիա) կողմից:

Դրական երևույթներ - Մի շարք պիոներ, այնուհետև մոլախոտային խոտատեսակներ հանքի գործունեության արդյունքում բացված տարածություններում քիչ թե շատ երկարատև աշխատանքներ չիրականացնելու արդյունքում ծածկում են համարյա բոլոր մակերեսները: Համարյա ամենուրեք այս տեղամասերում պիոներ խոտատեսակ է հանդիսանում տատրակը: Դատարկ ապարների լցակույտերի մի շարք հատվածներում արորիզեն ծառատեսակները հանդիսանում են պիոներ տեսակներ (այծուռենի և այլն):

**2022 և 2023 թվականներին հետազոտված ՀՀ ֆլորայի կարմիր գրքում գրանցված վայրաճ բույսերի և Հայաստանի և այլ
կարգավիճակ ունեցող էնդեմիկ տեսակների կազմ**

Դիտանցման ենթակա օբյեկտ	Հաշվառում	Նկարագրություն	Աճելավայրերի տարածք- քարտեզագրում	ՀՀ Բույսերի Կարմիր գրքի ելակետային տվյալներ	Էնդեմիկ տեսակներ	ՇՄԱԳ ելակետային տվյալներ (գտնվել է NN թվականին)
ՀՀ կարմիր գրքում գրանցված վայրաճ բույսեր և դրանց ապրելու միջավայրը						
Հայաստանի և այլ կարգավիճակ ունեցող էնդեմիկ տեսակներ						
Զանգակ զանգեզուրի - Campanula zangezura -	Հանքի Հյուսիսարևմտյան լցակույտի հարևանությամբ՝ լցակույտի և Թթուջուր տեղամասի միջև	Բազմամյա խոտաբույս է, 10-40 սմ բարձրությամբ պարզ կամ թույլ ճյուղավորված ցողունով և 1 կամ սակավաթիվ ծաղիկներով	Հայաստանում հանդիպում է Սյունիքում (Զանգեզուրի լեռնաշղթայի հարավային մաս, Մեղու լեռնաշղթա, Խուստուկ): Աճում է նաև Նախիջևանում (Զանգեզուրի լեռնաշղթա) և Հյուսիս-արևմտյան Իրանում (Ղարաբաղ լեռնաշղթա)	EN	Էնդեմ (Մեղրի, Զանգեզուր, Քարադաղ- Իրան)	Տեսակին սպառնում է տարածման և բնակության շրջանների կրճատում հանքերի բաց շահագործման հետևանքով
Galanthus artjuschenkoae Gabrieljan - Ձմեռնածաղիկ Արայուշենկոյի	Չորաստանի ստուգիչ տեղամաս	Բազմամյա խոտաբույս, ոչ մեծ գնդաձև սոխուկով: Տերևները երկարավուն-նշտաբաձև, բաց- կանաչ, անփայլ: Ծաղկակիրը ծաղկի ժամանակ տերևներից երկար: Ծաղկակիցը մանր, կծկված: Ծաղիկները սպիտակ կամ կրեմագույն, 35-40 մմ երկ., ներքև թեքված: Ծաղկապատի արտաքին մասերը ոչ մեծ հարթ սապատիկով, ներքինները՝ վերին մասում շատ լայնացած: Տուփիկը գնդաձև կամ կարճ տակառիկանման	Հայաստանում հանդիպում է Իջևանի և Զանգեզուրի ֆլորիստիկական շրջաններում: Հայաստանից դուրս հանդիպում է Թաիլանդում (Կասայից ծովի ափամերձ անտառային շրջաններում)	VU	Էնդեմ (Անդրկովկա ս)	Տեսակին սպառնում է տարածման և բնակության շրջանների կրճատում

Դիտանցման ենթակա օբյեկտ	Հաշվառում	Նկարագրություն	Աճելավայրերի տարածք- քարտեզագրում	ՀՀ Բույսերի Կարմիր գրքի ելակետային տվյալներ	Էնդեմիկ տեսակներ	ՀՄԱԳ ելակետային տվյալներ (գտնվել է NN թվականին)
Carex oligantha Steud. - Բոշխ սակավածաղիկ	Թթուջուր տեղամաս	Բազմամյա ցածրահասակ խոտաբույսեր 7-15 սմ բարձր.: Տերևները տափակ, ցողուններից զգալիորեն կարճ: Հասկիկները 1-3, բոլորը նստադիր, խմբված ցողունների զագաթին, վերինը՝ 0.5-0.8սմ երկ.: Ծածկոցի թերթերը սևավուն, վերևում՝ կարուկ սրացած: Պարկիկները 3.5 մմ երկ., հակաձվաձև, կանաչավուն, կտուցը 0.7 մմ երկ.:	Հայաստանում հանդիպում է Արագածի և Զանգեզուրի ֆլորիստիկական շրջաններում:	CR	-	Տեսակին սպառնում է տարածման և բնակության շրջանների կրճատում հանքերի բաց շահագործման հետևանքով
Iris lineolata (Trautv.) Grossh. - Հիբիկ նեղզծային	Արծվանիկի պոչամբարի արևմտյան և արևելյան ափեր	Բազմամյա կոճղարմատավոր բույս 10-15 սմ բարձր.: Տերևները նեղ-մանգաղաձև, հաճախ ուժեղ ոլորված: Ծաղկապատի արտաքին մասերի ետծալը 4-5 սմ երկ. 1,5 սմ լայն., սրագագաթ բաց գույնի բարակ մուգ ջղերով, կիսակլորավուն պուտով:	Հայաստանում տարածված է միայն Զանգեզուրի ֆլորիստիկական շրջանում	EN	-	Տեսակին սպառնում է տարածման և բնակության շրջանների կրճատում Արծվանիկի պոչամբարի մակերեսի մեծացման արդյունքում
Տանձենի զանգեզուրի - Pyrus zangezura	«Թթու ջուր» հատվածում, Դարագամի լցակույտի հարևանությամբ և Ողջի գետի միջին հոսանքի հատվածներում	Փոքր տերևաթափ ծառ է՝ 8-10 մ բարձրությամբ և 20-40 սմ բնի տրամագծով	Տարածված է միայն Հայաստանում՝ Զանգեզուրի լեռնաշղթայի վերին լեռնային գոտում, Մեղրու շրջանի Մազրա գյուղի շրջակայքում	-	Էնդեմ (Հայաստան)	Ունի պահպանության և տարածման խիստ կարիք
Բարակոտնուկ Ալբովի - Koeleria albovii subsp. albovii	Հանքի վերին գոտու սահմանակից ժայռոտ հատվածներ, դեպի Քաջարանի լեռնանցք, հանքի հյուսիս- արևմտյան լցակույտի հարևանությամբ լցակույտի և Թթու ջուր տեղամասի միջև	Բազմամյա, թույլ ճմային խոտաբույս է, (10) 15 - 40 (50) սմ բարձրությամբ և ուղղահայաց ցողուններով	Արևմտյան, Հարավ- արևմտյան և Հարավային Անդրկովկասում (Հայաստանի ողջ տարածքի վերին լեռնային գոտում)	-	Էնդեմ (Անդրկովկաս)	Աճելավայրը կարիք ունի մանրամասն հետազոտության

Ընդերքօգտագործման տարածքում կենդանական աշխարհի նկատմամբ դիտանցում՝ ձկներ

Դիտանցման ենթակա օբյեկտ	Հաշվառում	Դրանց տարածվածության արեալը և բնակատեղին	Տեսակների աճի դինամիկան և կառուցվածքը	Վերարտադրելիության գնահատումը	Ֆիզիկական վիճակի նկարագրությունը	ՀՀ Կարմիր գրքի էլակետային տվյալներ
ՀՀ գրքում գրանցված վայրի կենդանիներ և դրանց ապրելու միջավայրը	-	-	-	-	-	-
Ուրսի օբյեկտ հանդիսացող վայրի կենդանիներ և դրանց ապրելու միջավայրը	2022թ. Ողջի գետ՝ 6, Վաչագան գետ՝ 21, Նորաշենիկ՝ 16 2023 թ. Վաչագան գետ՝ 57, Նորաշենիկ՝ 3	Տարածված է Ողջի գետի ավազանում, այդ թվում Վաչագան և Նորաշենիկ գետերում: Բնակվում է գետերի արագահոս վայրերում:	Քանակը աստիճանաբար նվազում է: Պոպուլյացիաները հիմնականում ներկայացված են 15-20, երբեմն մինչև 30 սմ երկարություն ունեցող առանձնյակներով:	Բազմացման համար շատ կարևոր են ավազապատ առափնյա տեղամասերը, որոնց առկայությունը սահմանափակ է: Միաժամանակ գետերի աղտոտվածությունը և հիդրոտեխնիկական շինությունները նվազեցնում են կողակի վերարտադրողական պոտենցիալը: Ողջի գետում կողակի գլխաքանակի վրա կտրուկ ազդել է գետի հունի մաքրումը մեխանիկական եղանակով: 2023 թ. ամռանը կողակն այստեղ հանդիպել է սակավաթիվ առանձնյակներով, այն դեպքում, երբ նախորդ տարիներին բազմաքանակ էր:	Բնակվում են փոքր վտառներով, սնվելով ստորակարգ ջրային բույսերով:	Գրանցված չէ Կարմիր գրքում:
Կողակ <i>Capoeta capoeta</i> , գետային						
Կուրի բեղաձուկ <i>Barbus cyri</i> , գետային	2022թ. Ողջի գետ՝ 15, Վաչագան գետ՝ 31, Նորաշենիկ՝ 10 առանձնյակ	Տարածված է Ողջի գետի ավազանում, այդ թվում Վաչագան և Նորաշենիկ գետում: Բնակվում է գետերի համեմատաբար արագահոս վայրերում:	Քանակը համեմատաբար կայուն է, սակայն սակավաթիվ տեսակ է: Պոպուլյացիաները հիմնականում	Բազմացման համար շատ կարևոր են գետի խճապատ և մանր քարեր ունեցող տեղամասերը: Գետերի աղտոտվածությունը և հիդրոտեխնիկական շինությունները նվազեցնում	Բնակվում են փոքր վտառներով, սնվելով հատակային անողնաշար կենդանիներով:	Գրանցված չէ Կարմիր գրքում:

Դիտանցման ենթակա օբյեկտ	Հաշվառում	Դրանց տարածվածության արեալը և բնակատեղին	Տեսակների աճի դինամիկան և կառուցվածքը	Վերարտադրելիության գնահատումը	Ֆիզիկական վիճակի նկարագրությունը	ՀՀ Կարմիր գրքի ելակետային տվյալներ
	2023թ. Վաչագան գետ՝ 45 Նորաշենիկ գետ՝ 1 առանձնյակ		ներկայացված են 12-15, երբեմն մինչև 25 սմ երկարություն ունեցող առանձնյակներով:	են բեղավան վերարտադրողական պոտենցիալը: Ողջի գետում բեղավան գլխաքանակի վրա կտրուկ ազդել է գետի հունի մաքրումը մեխանիկական եղանակով: 2023 թ. ամռանը բեղավանը այստեղ բացակայել է, այն դեպքում, երբ նախորդ տարիներին հաճախակի էր հանդիպում:		
Արևելյան տառեխիկ <i>Alburnoides eichwaldii</i> գետային	2022թ. Ողջի գետ՝ 71, Վաչագան գետ՝ 316, Նորաշենիկ՝ 0 առանձնյակ 2023 թ. Ողջի գետ՝ 12 Վաչագան գետ՝ 652 Նորաշենիկ գետ՝ 68	Տարածված է Ողջի և Նորաշենիկ գետում: Բնակվում է գետերի արագահոս վայրերում:	Բազմաքանակ ձկնատեսակ է Ողջիի ավազանում: Ապրում են վտառներով, կազմված մի քանի տասնյակ առանձնյակներից: Պոպուլյացիաները հիմնականում ներկայացված են 6-8, երբեմն մինչև 12 սմ երկարություն ունեցող առանձնյակներով:	Բազմացման համար կարևոր են գետի հանքարդյունաբերական թափոններից զուրկ լինելը: Գետերի հիդրոտեխնիկական շինությունները նվազեցնում են տառեխիկի վերարտադրողական պոտենցիալը: Նմանատիպ ազդեցություն է գործում նաև գետերի հուները արհեստական մաքրման աշխատանքները, որի ժամանակ օգտագործվում է ծանր տեխնիկական միջոցներ:	Բնակվում են փոքր վտառներով, սնվելով պլանկտոնային և հատակային մանր անողնաշար կենդանիներով:	Գրանցված չէ Կարմիր գրքում:

Ընդերքօգտագործման տարածքում սողունների նկատմամբ դիտանցում

Դիտանցման ենթակա օբյեկտ	Հաշվառում	Դրանց տարածվածության արեալը և բնակատեղին	Տեսակների աճի դինամիկան և կառուցվածքը	Վերարտադրելիու թյան գնահատումը	Ֆիզիկական վիճակի նկարագրությունը	ՀՀ Կարմիր գրքի եղակետային տվյալներ	ՇՄԱԳ եղակետային տվյալներ
ՀՀ կարմիր գրքում գրանցված վայրի կենդանիներ և դրանց ապրելու միջավայրը	1. <i>Telescopus fallax</i> 1 2. Montivipera (Vipera raddei) 1	Լեռնային և նախալեռնային, քսերոֆիտ բուսականություն: Քարքարոտ զառիվայրեր	N/A	N/A	N/A	1. <i>Telescopus fallax</i> 2. Montivipera (Vipera) raddei)	Հիմնականում բոլոր նշված տեսակները
Որսի օբյեկտ հանդիսացող վայրի կենդանիներ և դրանց ապրելու միջավայրը							

Ընդերքօգտագործման տարածքում թռչունների նկատմամբ դիտանցում

Դիտանցման ենթակա օբյեկտ	Հաշվառում	Դրանց տարածվածության արեալը և բնակատեղին	Տեսակների աճի դինամիկան և կառուցվածքը	Վերարտադրելիության գնահատումը	Ֆիզիկական վիճակի նկարագրությունը	ՀՀ Կարմիր գրքի ելակետային տվյալներ	ՇՄԱԳ ելակետային տվյալներ, 2021թ. հաշվետվություն
ՀՀ կարմիր գրքում գրանցված վայրի կենդանիներ և դրանց ապրելու միջավայրը	Քարաքծիկ (<i>Aquila chrysaetos</i>), 2 հասուն առանձնյակ:	Մեկ զույգ բնադրում է Ողջի գետի կիրճում, դիտարկված տարածքներից դուրս: Դիտարկված տարածքները մտնում են այս զույգի որսահանդակի մեջ:	Տվյալ զույգը ստաբիլ է 2009-2023թթ. ընթացքում:	Տվյալ զույգը ստաբիլ արտադրում է 1 ձագ 2009-2023թթ. ընթացքում:	Դիտարկված առանձնյակները ոչ մի ֆիզիկական անառողջ վիճակի նշան չեն կրում:	ՀՀ Կարմիր գրքի ելակետային տվյալները վերաբերվում են ՀՀ տարածքին՝ 32-34 զույգ:	ՇՄԱԳ ելակետային տվյալները տեղեկացնում են տեսակի առկայության մասին, սակայն չեն մանրամասնում նրա թվաքանակը: 2021թ. հանդիպել է 1 հասուն և 1 դեռահաս առանձնյակ, իսկ 2022թ.՝ 1 հասուն առանձնյակ:
ՀՀ կարմիր գրքում գրանցված վայրի կենդանիներ և դրանց ապրելու միջավայրը	Ցախաքլորա-որս (<i>Accipiter gentilis</i>), 1 հասուն առանձնյակ:	Առնվազն մեկ զույգ բնադրում է Մեղրու լեռների հարավային մակրո-լանգում և՛ առնվազն մեկ զույգ՝ Բարգուշատի հարավային մակրո-լանգում, դիտարկված տարածքներից դուրս: Դիտարկված տարածքները մտնում են այս զույգերի հետբնադրման շրջանում օգտագործվող որսահանդակների մեջ:	Տվյալ զույգերը ստաբիլ են 2003-2023թթ. ընթացքում:	Տվյալ զույգերի վերարտադրողության հաջողությունը չի ուսումնասիրվել մինչ 2023թ.:	Դիտարկված առանձնյակը ոչ մի ֆիզիկական անառողջ վիճակի նշան չեն կրում:	ՀՀ Կարմիր գրքի ելակետային տվյալները վերաբերվում են ՀՀ տարածքին՝ 40-60 զույգ:	ՇՄԱԳ ելակետային տվյալները տեղեկացնում են տեսակի առկայության մասին գրականության տվյալների վրա հիմնվելով (դիտարկում չի եղել), սակայն չեն մանրամասնում նրա թվաքանակը: 2021թ. տեսակը չի հանդիպել, իսկ 2022թ. դիտարկվել է 1 հասուն առանձնյակ:

Դիտանցման ենթակա օբյեկտ	Հաշվառում	Դրանց տարածվածության արեալը և բնակատեղին	Տեսակների աճի դինամիկան և կառուցվածքը	Վերարտա- դրելիության գնահատումը	Ֆիզիկական վիճակի նկարագրությունը	ՀՀ Կարմիր գրքի ելակետային տվյալներ	ՇՄԱԳ ելակետային տվյալներ, 2021թ. հաշվետվություն
ՀՀ կարմիր գրքում գրանցված վայրի կենդանիներ և դրանց ապրելու միջավայրը	Գառնանգո (<i>Gypaetus barbatus</i>), 1 հասուն առանձնյակ:	Երկու գույգ բնադրում են Մեղրու լեռների հարավային մակրո- լանգում, դիտարկված տարածքներից դուրս: Դիտարկված տարածքները մտնում են այս գույգերի որսահանդակների մեջ:	Տվյալ գույգերը ստաբիլ են 2003- 2023թթ. ընթացքում:	Տվյալ գույգերը ստաբիլ արտադրում է 1 ձագ 2003- 2023թթ. ընթացքում:	Դիտարկված առանձնյակը ոչ մի ֆիզիկական անառողջ վիճակի նշան չէր կրում:	ՀՀ Կարմիր գրքի ելակետային տվյալները վերաբերվում են ՀՀ տարածքին՝ 11-12 գույգ:	ՇՄԱԳ ելակետային տվյալները տեղեկացնում են տեսակի առկայության մասին, սակայն չեն մանրամասնում ներառյալ թվաքանակը: 2021թ. հանդիպել է 1 հասուն առանձնյակ և 2022թ.՝ 1 հասուն առանձնյակ:
ՀՀ կարմիր գրքում գրանցված վայրի կենդանիներ և դրանց ապրելու միջավայրը	Բզակտուց (<i>Recurvirostra avocetta</i>), 0 առանձնյակ:	Հայաստանի սահմաններում տեսակը բնադրում է Արարատյան դաշտում, դիտարկված տարածքներից հեռու: Դիտարկված տարածքները շատ հազվագյուտ են օգտագործվում տեսակի կողմից, որպես հանգստի վայր չուի կամ քոչելու ժամանակ: Այս տեսակի դիտակումն 2022թ.՝ ըստ եզրակացության, պատահականու-թյուն է, քան թե տարացքի մշտական օգտագործման արդյունք, սակայն դա ճշտելու համար անհրաժեշտ է շարունակել մոնիթորինգը:	Տեսակի միտումն Հայաստանում, ըստ նախնական գնահատականի, ստաբիլ է 2003- 2023թթ. ընթացքում:	Անհայտ է:	2023թ. տեսակը չի գրանցվել:	ՀՀ Կարմիր գրքի ելակետային տվյալները վերաբերվում են ՀՀ տարածքին՝ սակայն չեն պարունակում քանակական տվյալներ:	ՇՄԱԳ ելակետային տվյալները չեն պարունակում տվյալներ տեսակի ներկայության վերաբերյալ 2021թ. տեսակը չի հանդիպել, իսկ 2022թ.՝ 5 առանձնյակ:

Դիտանցման ենթակա օբյեկտ	Հաշվառում	Դրանց տարածվածության արեալը և բնակատեղին	Տեսակների աճի դինամիկան և կառուցվածքը	Վերարտա- դրելիության գնահատումը	Ֆիզիկական վիճակի նկարագրությունը	ՀՀ Կարմիր գրքի ելակետային տվյալներ	ՇՄԱԳ ելակետային տվյալներ, 2021թ. հաշվետվություն
ՀՀ կարմիր գրքում գրանցված վայրի կենդանիներ և դրանց ապրելու միջավայրը	Կիսա- սպիտակավիզ ճանճորս (<i>Ficedula semitorquata</i>), 1 դեռահաս առանձնյակ:	Տեսակը բնադրում է Բարգուշատի և Մեղրու լեռների անտառային գոտում, դիտարկված տարածքներից դուրս: Դիտարկված տարածքները մտնում են այս տեսակի հետբնադրման տարածման շրջանի մեջ:	Տեսակի թվաքանակը կրճատվում է:	Անհայտ է:	Դիտարկված առանձնյակը ոչ մի ֆիզիկական անառողջ վիճակի նշան չէր կրում:	ՀՀ Կարմիր գրքի ելակետային տվյալները վերաբերվում են ՀՀ տարածքին:	ՇՄԱԳ ելակետային տվյալները տեղեկացնում են տեսակի առկայության մասին, սակայն չեն մանրամասնում ներա թվաքանակը: 2021թ. հանդիպել է 1 հասուն առանձնյակ և 2022թ.՝ 1 դեռահաս առանձնյակ:
Որսի օբյեկտ հանդիսացող վայրի կենդանիներ և դրանց ապրելու միջավայրը	Անտառային աղավնի (<i>Columba palumbus</i>), 6 հասուն առանձնյակ:	Տեսակը ամենայն հավանականությամբ բնադրում է հետազոտված շրջանում, մասնավորապես Դարագամի լցակայանի շրջակա տարածքում և «Թթու ջրի» տարածքում:	Անհայտ է:	Անհայտ է:	Դիտարկված առանձնյակը ոչ մի ֆիզիկական անառողջ վիճակի նշան չէր կրում:	Տեսակը ընդգրկված չէ ՀՀ Կարմիր գրքում:	ՇՄԱԳ ելակետային տվյալները տեղեկացնում են տեսակի առկայության մասին, սակայն չեն մանրամասնում ներա թվաքանակը: 2021թ. հանդիպել է 8 հասուն առանձնյակ, իսկ 2022թ.՝ չի գրանցվել:

Ընդերքօգտագործման տարածքում կաթնասունների դիտանցում

Դիտանցման ենթակա օբյեկտ	Հաշվառում	Դրանց տարածվածության արեալը և բնակատեղին	Տեսակների աճի դինամիկան և կառուցվածքը	Վերաբ-տադրելիության գնահատումը	Ֆիզիկական վիճակի նկարագրությունը	ՀՀ Կարմիր գրքի ելակետային տվյալներ	ՀՄՍԳ ելակետային տվյալներ
ՀՀ գրքում գրանցված վայրի կենդանիներ և դրանց ապրելու վիճակայրը							
Գորշ արջ <i>Ursus arctos</i>	2022թ.-ի նոյեմբեր, 2023թ.-ի փետրվար, ապրիլ, հուլիս	Դիտարկվել է Հյուսիս-արևմտյան լցակայանից դեպի արևմուտք, անտառամերձ տարածքներ:	Վերջին երկու տարիների ընթացքում գրանցվել է 2 առանձնյակ:	Դիտարկման ժամանակ արձանագրվել է հասուն արջ: Այս տարի գրանցվել է նաև բոթոթի հետքեր:	Արձանագրվել է հասուն արջի հետքեր:	VU B1 b(iii) Տարածված է Սյունիքի մարզում:	Անցած տարվա դիտարկումն էր , որի ժամանակ գրանցվել է 1 արջի հետք:
Հնդկական վայրենակերպ <i>Hystrix indica</i>	2022թ.-ի նոյեմբեր, 2023թ.-ի փետրվար, ապրիլ, հուլիս	Արձանիկի պոչամբարի շրջակայք, Ձորատեղի լցակայանից կից բուսականությունից մաքրված տարածք	Հունիսին նկատվել է մայրը 2 ձագերի հետ, որը կարող է խոսել հնարավոր աճի մասին:	Անցած տարվա դիտարկման ժամանակ գրանցվել է 2 ձագ: Այս տարի մեր կողմից ձագեր չեն գրանցվել:	Արձանագրվել է , ինչպես անցած տարի Ձորատեղի լցակայանից հարակից տարածքում մի քանի կղանք, որը հասուն կենդանու կողմից էր թողնվել: Մակայն քանակային առումով քիչ էր համեմատած անցած տարեա հետ:	VU B2a Տարածված է Սյունիքի մարզում:	Անցած տարվա դիտարկումն էրիի տվյալներ:
Գորշ ականջեղ <i>Plecotus auritus</i>	2022թ.-ի նոյեմբեր, 2023թ.-ի փետրվար, ապրիլ, հուլիս	Ձայնագրվել է ուլտրաձայնային ձայնագրող սարքերի միջոցով Անատառային էկոհամակարգում, որն էլ հենց հանդիսանում է այս տեսակի բնակատեղը	Չկան տվյալներ	Չկան տվյալներ Այս տարի ձայները չեն գրանցվել:	Մայրական գաղութներ «ԶՊՄԿ» ՓԲԸ տարածքում չի արձանագրվել:	VU B1a Տարածվածությ-յան վերաբերյալ Սյունիքի մարզում տվյալներ չկան:	Անցած տարի 1 ձայն:
Հարավային պայտաքիթ <i>Rhinolophus euryale</i>	2022թ.-ի նոյեմբեր, 2023թ.-ի փետրվար, ապրիլ, հուլիս	Ձայնագրվել է Հյուսիս-արևմտյան լցակայանից դեպի վերև, լեռնատափաստանային գոտում:	Չկան տվյալներ	Չկան տվյալներ Ձայները չեն գրանցվել	Մայրական գաղութներ հայտնի են Վայոց Ձորի մարզից, սակայն «ԶՊՄԿ» ՓԲԸ տարածքում չի արձանագրվել:	VU B1ab+2a Տարածված է Սյունիքի մարզում:	Անցած տարի 5 ձայն:


Դիտանցման ենթակա օբյեկտ	Հաշվառում	Դրանց տարածվածության արեալը և բնակատեղին	Տեսակների աճի դինամիկան և կառուցվածքը	Վերար-տադրելիության գնահատումը	Ֆիզիկական վիճակի նկարագրությունը	ՀՀ Կարմիր գրքի էլակետային տվյալներ	ՇՄՍԳ էլակետային տվյալներ
Բեզուարյան այծ <i>Capra aegagrus</i>	2023	Գրանցվել է հանքի տարածքում	Չկան տվյալներ	Չկան տվյալներ	Գրանցվել հանքի աշխատակիցների կողմից տեղադրված ֆոտոթակարդի միջոցով է արու առանձնյակ:	VU B2ab(iii), C2a(i)	Տվյալներ չկան:
Որսի օբյեկտ հանդիսացող վայրի կենդանիներ և դրանց ապրելու միջավայրը							
Փոքրսուղ	2023թ.-ի փետրվար, ապրիլ, հուլիս	Դիտարկվել է Հյուսիս-արևմտյան լցակույտից դեպի արևմուտք, անտառամերձ տարածքներում, Ձորատեղի լցակույտին կից բուսականությունից մաքրված տարածքում:	Գրանցվել է կենդանու կենսագործու-նեության հետքերը:	Հնարավոր չէ գրանցել:	Տարածքում գրանցվել են մի քանի հետքեր: Համեմատած անցած տարվա դիտարկումների հետ հետքերը քիչ են եղել:	-	Տվյալները բացակայում են:
Քարակզաքիս	2022թ.-ի նոյեմբեր, 2023թ.-ի փետրվար, ապրիլ, հուլիս	Գրանցվել է Ֆաբրիկայի ստորին հատվածում դեպի Ողջի գետին մոտ տարածքում, լցակույտերի հարակից տարածքներում: Ֆոտոթակարդների կողմից գրանցվել է նաև ֆաբրիկայի տարածքում:	Գրանցվել է կենդանու կենսագործու-նեության հետքերը մի քանի տեղամասերում:	Հնարավոր չէ գրանցել:	Տարածքում հետքերը բավարար են եղել:	-	Տվյալները բացակայում են:
Վայրի խոզ	2022թ.-ի նոյեմբեր, 2023թ.-ի փետրվար, ապրիլ, հուլիս	Դիտարկվել է վայրի խոզերի փորած հետքեր Ձորատեղի լցակույտի վերին հատվածում գտնվող կաղնուտում: Դիտարկվել է Հյուսիս-արևմտյան լցակույտից դեպի արևմուտք:	Ձորատեղիի մոտ գրանցվել է 5 կենդանի, իսկ Հյուս-արևմտյան տարածքում 2 կենդանու հետք:	Գրանցվել է մոտավոր 7 կենդանու հետք:	Ձորատեղիի տարածքում, գրանցվել են ձագերի հետքեր:	-	Համեմատած անցած տարվա հետ պոպուլյացիան ստաբիլ է:

Դիտանցման ենթակա օբյեկտ	Հաշվառում	Դրանց տարածվածության արեալը և բնակատեղին	Տեսակների աճի դինամիկան և կառուցվածքը	Վերար-տադրելիության գնահատումը	Ֆիզիկական վիճակի նկարագրությունը	ՀՀ Կարմիր գրքի ելակետային տվյալներ	ՀՄԱԳ ելակետային տվյալներ
Եվրոպական նապաստակ	2022թ.-ի նոյեմբեր, 2023թ.-ի փետրվար, ապրիլ, հուլիս	Դիտարկվել է Հյուսիս-արևմտյան լցակայանից դեպի արևմուտք, անտառամերձ տարածքներ: Արծվանիկի պոչամբարից դեպի արևմուտք ընկած տարածքում:	Գրանցվել են 5 կենդանու հետքեր:	Հնարավոր չէ գրանցել:	Գրանցվել են մի քանի կենդանու հետքեր:	-	Անցած տարվա տվյալների հետ համեմատած տվյալները գրեթե նույնն են:
Սովորական աղվես	2022թ.-ի նոյեմբեր, 2023թ.-ի փետրվար, ապրիլ, հուլիս	Դիտարկվել է Հյուսիս-արևմտյան տարածքում, Արծվանիկի պոչամբարի շրջակայքում, Ձորատեղի, Մալիտակ ջուր 2 լցակայանների կից տարածքներում	Պոպուլյացիան կայուն է	Պոպուլյացիան կայուն է	Տվյալ տեսակը լայն տարածում ունի և գալիս է լցակայանների տարածք սննդի պատճառով՝ կրծողների, որոնց բները գտնվում են լցակայանների տարածքում:	-	Նույն տվյալներն են ստացվել ինչ անցած տարի:

Մակերևութային ջրերի, մթնոլորտային օդի և աղմուկի մշտադիտարկման դիտակետերի տեղադիրքեր




Համար		X	Y	Նմուշարկման կետեր
■	4	599597.1	4334167.6	WT1 1110
■	5	597558.9	4334423.3	WT1 1113
■	6	600847.7	4334078.9	WT1 1115



Համար	X	Y	Նմուշարկման կետեր
 4	624031.1	4343833.3	WT1 1111
 5	625827.7	4342900.6	WT1 1117
 6	624028.5	4343687.4	Փռուչ մշտադիտարկման կետ
 7	623503.8	4343319.9	Արեւիկայի արհեստագիտական պարզվածք (4-րդ բունդ)
 8	623431.0	4343347.9	Նորաշենիկի գետ միջև արտանետման կետ
 9	624300.9	4342580.9	Նորաշենիկի գետ արտանետման կետին խառնվելուց հետո

Ստորգետնյա ջրերի մշտադիտարկման դիտակետերի տեղադիրքեր




Արծվանիկի պոչամաբր



Հողային ծածկույթի մշտադիտարկման դիտակետերի տեղադիրքեր

Բացահանքի տարածք



Արծվանիկի պոչամբարի տարածք

